600.0224.24.06.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2020 թվականի №224Ա
ք. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությունը և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը համապատասխանաբար՝ 2020 թվականի ապրիլի 17-ի №2/8-041 և ապրիլի 21-ի №2286-20 գրություններով դիմել են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով համաձայնություն տալ «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող, «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությանը պատկանող 1 597 430 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի՝ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում գրավադրման գործարքի (այսուհետ՝ Գործարք) կնքմանը: Ըստ գրությունների՝ Գործարքը նախատեսվում է կնքել ի ապահովումն «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ «Լիսմարթ» փակ բաժնետիրական ընկերության (հանդիսանում է Տաշիր ընկերությունների խմբի անդամ) վարկային պարտավորությունների կատարման,

բ) Հանձնաժողովը, ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետով, 2020 թվականի մայիսի 7-ի №ԳԲ/34.1-Մ2-2/1640-20 և հունիսի 11-ի №ԳԲ/34.1-Ղ3-1/2281-20 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ՝ ստանալու Գործարքի վերաբերյալ կառավարության դիրքորոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թվականի հունիսի 5-ի № 02/12.8/27338-2020 գրությամբ ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումն առ այն, որ Գործարքի կնքումը նպատակահարմար չէ: Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի հունիսի 16-ի №02/12.8/28861-2020 գրությամբ ներկայացվել են նաև Գործարքի վերաբերյալ շահագրգիռ պետական մարմինների դիրքորոշումները,

դ) «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ նույն հոդվածում նշված գործարքի համաձայնեցումը ի թիվս այլ հիմքերի կարող է մերժվել, եթե այն Հայաստանի Հանրապետության կառավարության գնահատմամբ վնասում կամ կարող է վնասել ազգային անվտանգությունը կամ պետական շահերը,

ե) Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը գործարքի կնքմանը համաձայնություն չի տալիս, եթե այն Հայաստանի Հանրապետության կառավարության գնահատմամբ վնասում է կամ կարող է վնասել ազգային անվտանգությանը կամ պետական շահերին,

զ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով, որպես ազգային անվտանգության և պետական շահերի ապահովման համատեքստում համապատասխան գործարքներին գնահատական տվող պետական մարմին, Գործարքի կնքումը համարել է ոչ նպատակահարմար, ինչը «Էներգետիկայի մասին» օրենքի և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն Գործարքին համաձայնություն չտալու հիմք է, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Մերժել ի ապահովումն «Լիսմարթ» փակ բաժնետիրական ընկերության վարկային պարտավորությունների կատարման «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությանը պատկանող 1 597 430 հատ հասարակ անվանական բաժնետոմսերի գրավադրման գործարքի կնքմանը համաձայնության տրամադրումը:

2. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական

ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու են սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերությանը և «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
24 հունիսի 2020թ.